

ԱՍԼԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

(Պատկերով)

Հրատ.
«Գրօթակի»

1907
ԺՆՆԿՎ

ԱՍԼԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ


ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

(Պատկերով)

Հրատ.
«Գրօթակի»

1907
ԺՆՆԿ





ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ

(1872 - 1907)

Զ Օ Ն

Միշտ ժողովրդի մէջ, միշտ ժողովրդին կպած այդ էր նրա յեղափոխական տենչը, յատկանիշը նրա գործելակերպի, անսպառ աղբիւրը այն մարտական հասամրձակութեան, որով նա ապրեց, փայլեց ու վերջին ըոպէին... այրեց:

Տարօնի ու Տալտրիկի տանջանքը իր աչքով չափեց, ականջով լսեց իր երկրի վշտոտ աղաղակը, և այդ վիշտն ու տանջանքը նրա հերոսութեան հնոցն եղաւ, ոգևորիչ հրեշտակը այն արինոտ ձեռնարկների, ուր նա շողքեր արձակեց իբրև զինուոր և խմբապետ, իբրև վրիժառու և յեղափոխող:

Երբէք թիկուն չը դարձրեց, երբէք ձեռք չ'առաւ տարագրի ցուպը: Աչքերը Ֆրոֆրո քարին յառած՝ նա մնաց մեծ իր հաատով, անյողզող՝ իր կամքով, անընկճելի՝ իր սրով...

Հերոս՝ թշնամու դիմաց, հերոս մնաց և մահւան հանդէպ: Զգուշութեան կոչերին անտարբեր, նա սիրած ժողովրդին կտակեց ոգևորութեան վերջին շեշտը-արհամարանք դէպի մահը-խորհրդաւոր ոյժը սքանչելի մեծագործութեան:

Ռազմիկ-ընկերները արտասուքով լացին հերոս-մարտիկի դիակը, հեռաւորները՝ նրա խնկելի յիշատակը-արժանի սքանչացման և անհուն կսկիծի...

1885-ին, առաւօտ մը, Սասնոյ սարէն լեռնցի մը կ'իջնէր դէպի վար: Քովն ի վեր կը քալէր պատանի մը՝ պայծառ, լուսաւոր ճակատով և կրակոտ, համարձակ աչքերով: Հայր ու տղայ էին: Կերթային դէպի Առաքելոց վանքը:

–Աստուած օգնական, հայր սուրբ:

–Հոգուդ պահապան, զաւակս:

–Մեռնիմ քեզիք, հայր սուրբ, էտա զիմ լաճ բերեր եմ վանք կարդալ սովրելու. Միս քեզիք, կաշին ու ոսկոր ինծիք:

Այդ միսն ու ոսկորը Գէորգինն էին, որու հայրը գրին ու գրքին երկիւղած պաշտամունքովը՝ կը բերէր իր զաւակը ահա Առաքելոց վանքի դպրովթեան տաճարին, իբրև մատաղ:

Տասնևչորս տարեկան էր այն ատեն Չավուշը, հազիւ խելահաս ու գիտակից այդ ճակատագրական նւիրումին՝ որ կը բանար կեանքի առաջին խորհրդաւոր կամարը իր առջև և որմէ ետք դեռ պիտի բացւէին նոր ու անծանօթ կամարներ՝ լի մրրկայոյզ անակնկալներով ու գահավէժներով, լի պայքարով, փոթորիկով ու ալեկոծովթեամբ:

Դժար թէ չորս հսկայ պարիսպներով շրջապատած այդ դարաւոր մենաստանը կարողանար պահել իր մէջ Բսանաց գաւառի ըմբոստ զաւակը, եթէ այդ մենաստանը՝ Առաքելոց վանքը չ'ըլլար միայն, ուր լեռնական մատաղ բայց խրրոխտ հոգիները՝ հեռու միստիքական թելադրութիւններէ ու կրօնական աշխարհատեսաց, ջլատիչ տպաւորութիւններէ, կուգան սնանիլ քիչ մը լոյսով ու ձգտիլ դարձեալ իրենց սարերու կոյս ազատութեանը:

Չորս տարի մնաց Գէորգը վանքին մէջ և այդ դպրոցական չորս տարիները եղան նոյնքան արկածալից ու անհանդարտ, որքան իր կեանքի յետագայ տարիները. կոհի քիւրդ լաճերու հետ՝ որ կը համարձակէին վանքի գառնուկները գողնալ, կոհի քիւրդ հովիւներու հետ՝ որ կը բերէին իրենց նախիրը արածելու վանական արօտներու վրայ:

Այս միջոցներուն էր ահա, որ վանքի շուրջը հանդիպեցաւ Արաբօյին ու ընկերներուն և առաջին անգամ լսեց „ընկերութիւն“ խորհրդաւոր բառը: Ոգորումի, արկածի և խոտվքի ծարաւի իր հոգոյն խորը արթնցան առաջին դիւցազնական բնազդները այ սհանդիպումէն՝ որ ներշնչեց իրեն անձնավստահութիւն ու յանդգնութիւն: Եւ սրտովին կապեցաւ Արաբօյին, Լևոնին ու ընկերներուն, որոնց գաղտնաբար կերակուր կը տանէր վանքէն:

Անծանօթ գրգիռ մը նեղել կսկսէր իր պատանի զգացումները և անհրապոյր, հետզհետէ անտանելի կը դարձնէր իրեն՝ վանքն ալ, դպրատունն ալ, դասագիրքն ալ:

Վրայ հասաւ Կիլիզարի ողբերգական դէպքը և Մուսա-պէկի խժոժութիւնները, որոնք ցնցեցին Տարօնը:

Դժոխք դարձաւ վանքը: Գէորգ կապեց տրեխները, վերցուց ճոկանը ու առաւօտ մը նորէն իր լեռնաշխարհը բարձրացաւ:

Մքտինքն է հիմա, իր պապենական օրհնեալ օճախը:

Մքտինքը, Գէորգի այդ ծննդավայրը, Բսանաց գաւառի այն գիւղն՝ Պէրմի հետ, որ սնուցած է Սասնոյ յայտնի կտրիճները և խանձարարուրը օրօրած է այն քաջարի ասպետներուն, որոնք իրենց քաջագործութեան համբաւովը լեցուցած էին երկիրը:

Վարպետ և անվեհեր որսորդներ են հոն ամէնքն ալ, այդ վայրի ու խրոխտ աշխարհին մէջ՝ որ թօթափած իր վրայէն բոյս ու բուսականութիւն՝ ժայռ ու ապառաժ է կտրած: Ոչ մէկ քնքշութիւն, ո՛չ մէկ փափկութիւն, բընութեան ո՛չ մէկ թեթեւ նազանք. սեպ կատարներուն վրայէն՝ որ կը փայլին արևուն դէմ, կանցնին քարայծները հովի պէս արագ և օդին մէջ կը լաւ արծիւին հզօր թևերուն թափահարումը. յարածամ, տևականօրէն տարերային պայքարը կը լարէ կենդանին կենդանիին, քիւրդը հայուն և հզօրը տկարին դէմ: Վա՛յ տկարին, վա՛յ անզօրին:

Գէորգին հայրը համբաւաւոր որսորդ էր, որուն աչքերը դժբախտութիւն ունեցան տարիներ յետոյ լոյսէ զրկելու: Գէորգին կը մնար ուրեմն՝ սպաննելու համար լեռան ձանձրոյթը, հօրը հրացանը շալկել և թափառիլ մացառներուն ետև, ապառաժներուն վրայ և որսալ ինչ որ հանդիպէր:

Առտուն կանուխ դուրս գալով տունէն՝ իրիկունը մութին հետ տուն կը մտնէր:

Վանքէն, վարի աշխարհէն, Արաբօյէն ու ընկերներէն արդէն բաժնւած էր աւելի ըմբոստ, աւելի խիզախ: „Ընկերութիւն" բառը մոզական ազդեցութիւն ըրած էր անոր մտքին վրայ, որ կը մղէր զինքը իր շուրջը խմբելու երիտասարդ ընկերներ և պատրաստելու զանոնք:

Եւ մանուկ „ընկերութիւնը" պատանի այդ ըմբոստներուն՝ յափշտակած Արաբօյի, Լևոնի քջաագործութիւններով՝ անդադար կուի մէջ էր քիւրդ լաճերու հետ, առաջնորդ ունենալով Գէորգը:

Բայց հազիւ տարի մը կը տևէ այս ազատ, ինքնիշխան կեանքը՝ երբ տարօրինակ միջադէպ մը եկաւ յայտնելու թէ այս պատանիին մէջ կազմած էր արդէն պինդ և անկախ նկարագիր մը, որ կը շեշտէր անոր ըմբոստ անհատականութիւնը:

Իրիկուն մը տուն վերադարձին, հայրեր բարկացաւ իրեն և արգիլեց որ իր հրացանը չի գործածէ այլևա:

— Վայ, այդպէս, հայ, ըսաւ Գէորգ, թող այս օճախը ինծի հարամ ըլլայ մինչև որ ես ինծի համար հրացան մը չը գտնեմ:

Գեղեցիկ հրացան մը ամբողջ հարստութիւն մը, թագաւորութիւն մը կարժէ Սասնոյ լեռներուն վրայ: Ո՞ր գտնել:

Գէորգ վար իջաւ սարէն, ջորեպանի մը հետ գնաց շիտակ Հայէպ՝ դրամ վաստկելու, որպէսզի հրացան մը գնէ: Հազիւ վեց ամիսի չափ մնաց հոն, որովհետև իր ազգականները իր հանած հրացանը գնեցին տին իրեն ու վերադարձուցին հայրենիք:

Երբ տուն դարձաւ ու դռնէն ներս մտաւ, իր „պոահիմփաշա" չախմախլի հրացանը հօրը առջև դրաւ ու ըսաւ:

— Վատ դրացին մարդս գործիքի տէր կ'ընէ...

Ճիշտ է, ոչ միայն գործիքի տէր եղաւ, այլ և զբտաւ իր բացարձակ անկախութիւնը:

Այս պահուն արդէն 90 թականն էր, որ կը բանար հայկական յեղափոխութեան արիւնոտ շրջանը, և դեռ յեղափոխական առաջին քարոզիչները Սասնոյ լանջերուն վրայ չ'երևցած՝ արդէն Գէորգը, ինքնաբերաբար, իրերու բռնութեամբը, շրջապատող պայմաններուն դէմ ըմբոստ՝ կը հրափրէր գիւղացի երիտասարդութիւնը „ո՛չ խարճ, ո՛չ ալ խարաճ տալ կառավարութեան":

Ու երբ Տամատեան Սասնոյ վրայ ոտք կոխեց՝ Գէորգը եղաւ անոր առաջին ընկերը, անոր վստահելի ու ամէնէն անխոնջ գործակիցը, ինչպէս նաև տեղին պայմաններուն աւելի ծանօթ ու իրազեկ ուղեցոյցը:

Հազիւ թէ տարւան մը կազմակերպական աշխատութիւնը վատնած էր, և ահա վրայ հասաւ Տալտրիկի՝ 92 թականի մեծ կոփւր: Քիւրդ աշիրէթները ահագին ուժով ինկան Տալտրիկի վրայ:

Այս կռիւն մէջ՝ որուն մասնակից էր նաև Հրայրը-Գէորգ, հակառակ իր փոքր տարիքին ու փոքր հասակին, ցոյց տաւ այնպիսի քաջութիւն, այնպիսի արտակարգ յանդգնութիւն, որ Տալտրիկի ամէնէն փորձ ու տարէց ռազմագէտներուն հիացումը և զարմանքը գրաւեց: Կոփւր բուռն ու օրհասական էր, որովհետև, երկրորդ օրը, թշնամին օգնութիւն ստացած և ուժովցած՝ գրոհ կուտար, և տալտրիկցիները կը պատրաստէին նահանջել դէպի Ֆոֆոքարը: Խուճապ մը ոչ միայն պէնամուս պիտի հանէր ամբողջ Տալտրիկը, այլ նաև աղէտալի ջարդի մը պիտի մատնէր 6-700 ընտանիք: Գէորգը՝ Փրիսվայ Տէր-Գաբրիէլ քահանային հետ՝ կռնակ կռնակի հերոսաբար շարունակեցին դիմադրութիւնը և խլեցին յաղթութեան փառքը:

Սասունը փրկած էր և յաղթական:

Առաջին դափնին էր որ Գէորգը կը շահէր 21 տարեկան հասակին մէջ և իր անունը կը դարձնէր ժողովրդական ու սիրելի:

Անցաւ տարի մը: Կառավարութիւնը կը հետապնդէր Տամատեանը:

93-ին ինքը Տալտրիկ կը գտնւէր, երբ գոյժ հասաւ թէ Սէմալի մէջ ձերբակալած է Տամատեանը: Անմիջապէս հաւաքելով տալտրիկցիները՝ թուաւ դէպի Սէմալ հաւարի. սակայն ուշ էր արդէն, Տամատեանը իջեցուցած էին Մուշ: Այդ օրէն՝ աւելի խոր ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ լեցած դէպի բռնակալութիւնը, ուխտեց վար չըդնել զէնքը և նւիրիլ յեղափոխութեան, մինչև իր վերջին շունչը:

Եւ հաւատարիմ մնաց իր ուխտին:

Ի զո՛ւր կառավարութիւնը ձերբակալելով Տամատեանը՝ կը յուսար թէ ազատութեան աստղը Սասնոյ բարձրունքնե-

րուն վրայ թերած և խաւարած ըլլար: Գէորգը հոն էր իր ընկերներով վառ պահելու նւիրական հուրը:

Երկար չը տևեց որ Մուրատ Էֆէնտին-ինչպէս կ'անանեն սասունցիները-երկրորդ անգամ ըլլալով վերադարձաւ Կովկասէն, ուր գացած էր զէնք ու ռազմամթերք ճարելու: Գէորգ՝ իր ընկերներուն՝ Կարապետի, Քոլոս Օհաննէսի, Ադամի ու միաներուն հետ միացան Մուրատ Էֆէնտիին:

Սկսան դարձեալ դանդաղ բայց անվհատ աշխատութիւնը՝ կազմակերպելու և համախմբելու մէկ գաղափարի շուրջ լեռնական այս արի ժողովուրդը, որ սակայն բաժան բաժան գիւղերու մէջ, յաճախ մինչև եսականութիւն հասնող ծայրայեղ անհատապաշտութեամբ մը և ցեղային ցաւալի հակակրութիւններով տարած՝ կը դժարացնէր հաւաքական ճիգն ու ընդհանուր գործակցութիւնը հասարակաց թշնամիին դէմ:

Դժբախտաբար, այդ կիսանկախ, բռնակալութեան անմիջական ապականիչ դրացիութենէն հեռու ինկած սարերուն վրայ ալ վատութիւնը գոյութիւն ունէր: Ալի-Զոնանի ուսը՝ որ մատնած էր Արաբօն ու իր ընկերները, կը հետապնդէր այս անգամ Մուրատ Էֆէնտին ու Գէորգը, մինչև որ Գէորգի արդարակորով բազուկը վերջ տուաւ այդ սողունի կեանքին:

Վրայ հասան 94 թականի մեծ օրերը:

Անթիւ, անհամար աշիրը պաշարեց Կէլիէկուզանն ու Սէմալը, և սկսաւ սարսափի՛, անհաւասար կռիւր՝ որ տևեց տասը օր: Գէորգի ամբողջ մարտական խումբը կը բաղկանար 8 կտրիճներէ, բայց իր հետ էին աննման տալտրիկցին, սէմալցին, շէնրքցին ու կէլիէկուզանցին. Իսկ թշնամին անհամար էր:

Միայն սասունցին կարող էր ճակատ տալ այս տեսակ ահաւոր յարձակման մը և միայն Գէորգին անվեհեր յանդգնութիւնը կարող էր դէմ դնել և արհամարել թշնամիին զօրութիւնը:

—Տէ լրխըն, պոայէ մըն, տէ լեխըն,—զարկ, եղբայր, զարկ, կը պոռար, իմտատը շո՛ւտ կուգայ կը հասնի Ռուսաստանէն. մի կարծիր որ այս 5 սիրմալիով ու 2 խաբախլիով պիտի մնանք. եթէ մնանք ալ՝ յաղթութիւնը մերն է, Մուրատ Էֆէնտին մեզի համար փաշփուշտ կը լեցնէ. զարկէ՛ք, զարկէ՛ք անխնայ...

Բայց Ռուսաստանը շատ հեռու էր և կոփւր օրհասական: Կառավարական զօրքը՝ որ սկիզբները հանդիսատես կը մնար լոկ-յուսալով որ քիւրդ աշիրէթները կարող պիտի ըլլային շուտով յաղթանակը տանիլ-խաբւած իր հաշին մէջ, նախ քիւրդ տարագով ծպտած, յետոյ յայտնապէս՝ միացաւ բարբարոս խուժանին ու յարձակումը սաստկացաւ:

Քաջարի սասունցին կամաց-կամաց սկսաւ նահանջել դէպի Տաւրիկ՝ առաջնորդութեամբ Գէորգի ու ընկերներուն: Փամփուշտները սպառած էին, ռազմական դիրքերը անցած թշնամիին ձեռքը, Սասնոյ բոլոր կիրճերն ու ճամբաները բռնած՝ զօրքերէն ու քիւրդերէն: Դիմադրութիւնը անկարելի էր այլեւա շարունակել:

Գէորգը, Մուրատ էֆէնտին ու շարք մը տաւրիկցիներ բռնադատեցան ապաստանիլ Տաւրիկի Հարթ թաղին տակ գտնուող քարայրը՝ որ 10 րոպէով հեռի է Ձկնկոլ Քավէն: Թշնամին սակայն՝ մատնութեան մը շնորհիւ, իմանալով թագստոցին տեղը՝ պաշարեց քարայրը, զօրքը վերէն գալով ու Փափոռէ Կէնճն ալ իր աշիրով գետին միւս կողմէն: Ինքնապաշտպանութեան ոչ մէկ միջոց: Սակայն Գէորգը, Սասունի հպարտ զաւակ, չուզելով գլուխ ծռել, հրացանը թշնամիին ուղղեց:

—Վար դիր հրացանդ, ընկեր, խնդրեց Մուրատ էֆէնտին հանդարտ, մենք մեր 40 փամփուշտով, կուժ մը ջրով ու սակառ մը խաղողով չենք կրնար երկար դիմանալ, պէտք է համակերպիլ...:

Մուրատը, Գէորգն ու ընկերները ձերբակալւելով տարւեցան Սէմալի եկեղեցին, ուր չարչարանքի ու տանջանքի առաջին քստմնելի փորձերուն մկրտութիւնը կրեցին. մինչ դուրսը, կապաններուն, կիրճերուն և Տաւրիկի գեղերուն մէջ կը լայնանար, կ'ընդհանրանար անասելի, ահաւոր եղերերգութիւնը Զէֆիի վայրագ հրամանատրութեամբ:

Մուշէն Պիթլիս և Պիթլիսէն դարձեալ Մուշի բանտը, երբ եղեռնադատ ատեանը վճռեց արդէն դատապարտութիւնը:

Տասնևհինգ տարւան բերդարգելութիւն:

Գէորգին թեցաւ թէ այդ կեանքը հազար անգամ անգութ ու անտանելի էր գերեզմանէն. կը տեսնէր արդէն որ բանտին մէջ իր երիտասարդութիւնը և կորովը և ինքնավստահութիւնը կորցնելով պիտի մնար միայն ստուեր մը նախկին ռազմիկ Գէորգէն:

Անկարելի էր համարկերպիլ այս վախճանին:

Եւ սասունցին սկսաւ կրծել իր գառագեղին երկաթները: Ազատ լեռները կը տենչար:

Պէտք էր քանդել „Սվարի դրշլասիին“, Մուշի այդ անիծեալ բանտին վանդակները՝ թոչելու համար դարձեալ դէպի Սասնոյ սարերը, որոնց ազատ սարսուռը կը բերէր իր հետ քամին:

Մուրատը երրորդ յարկն էր, Գէորգը երկրորդ յարկը, և խստիւ արգիլած էր յարաբերութիւն ունենալ: Մովթ ու անարև նկուղին մէջ՝ առարկայ մշտական նախատինքի, զրկանքի, բանտային ստորերկեայ տանջանքներու՝ մօտ երեք տարի համբերեց:

Առաջին օրէն երբ բանտի չորս պատերուն մէջ փակեցաւ, յանդուգն վտանգները չափող և անոնցմէ օգտւելու վարժ իր աչքերը սրատեսութիւնն ունեցան արդէն նշմարելու այն հնարատր կէտը՝ որ կրնար անցք տալ իր փախուստին:

Իրեն լոյս տտող պատուհանը՝ պատշգամբաձև դուրս ինկած էր պատին երեսէն մէկ քանի թիզ և վանդակի մը պէս կը կախւէր բարձրութեան վրայ. Գէորգը հաշուեց որ եթէ կարելի ըլլար պատուհանը ծակել և յաջողութեամբ գործը գլուխ հանել, այն ատեն կը մնար միայն վար կախիլ և անգամ մը ոտքերը գետին դնել... անկէ անդին ազատութիւնն էր:

Սկսաւ անշուկ և մրջինի աշխատութիւնը գիշերան մովթին ու լուծեան մէջ՝ և ամէն առաւօտ հողը գրպանովը կը կրէր դէպի... ու կանհետացնէր. բանտային խուզարկուներէն թագուն պահելու համար Գէորգը գործադրեց ապշեցուցիչ հնարամտութիւն և խորագիտութիւն:

Աշխատութիւնը իր վախճանին կը մօտենար, բայց ուրիշ նոյնքան յամառ, նոյնքան հզօր մտահոգութիւն մը ունէր: Ինչպէ՞ս փախչիլ բանտէն՝ առանց Մուրատ Էֆէնտիին, որուն համար մասնատր յարգանք կը տաժէր: Այս իսկ պատճառով քանի մը անգամ ներկայացած առիթներէն կամովին չուզեց օգտիլ, անոր համար որ Մուրատ Էֆէնտին իր հետը պիտի չ'ըլլար: Ուստի ծակեց առաստաղը, նորօրինակ բայց ապշեցուցիչ միջոցով մը հեռախօսի հաղորդակցութիւն մը հաստատեց Մուրատի հետ. մանկութենէն սորված էր թէ լուցկիի մը երկու տուփերու միջև թել

կապելով՝ կարելի էր խօսակցութիւն կատարել մօտաւոր հեռաւորութեան մը վրայէն: Այդպէս ալ ըրաւ:

Սակայն Մուրատը կը յամառէր մերժել ամէն առաջարկ: Գէորգը՝ յուսահատութիւնը հոգոյն մէջ, համոզւեցաւ որ պնդելն ու աղերսելն անօգուտ էր վերջապէս:

1897-ի ապրիլի 7-ն էր. ամէն ինչ պատրաստ՝ յանդուգն և գերագոյն փորձը հարկաւոր էր: Այդ իրիկուն բարեբախտաբար սարսափելի փոթորկալից և ձիւնախառն անձրևի պատճառով, թանձր մութ մը տիրեց: Գէորգը կապեց մէջքին պարանը՝ որ ինքը հիւսած էր իր ձեռքով, (մարդ չը գիտէր ինչպէս և ո՞ր կէտ ձեռք ձգած էր այժի մազը), ու օձի պէս սողաց բարձրութենէն վար. ընկերները վարը կըսպասէին արդէն: Բանտին պահակը՝ մութին մէջ մարդկային սիլութիւններ զանազանելով՝ հարցուց սպառնաձայն:

—Ո՞վ էք դուք:

—Ճամբորդներ:

Ու միամիտ պահակը՝ քաշւեցաւ իր անկիւնը, ինզիմք պատսպարելով երկինքէն իջնող հեղեղէն:

Համաձայն նախապէս ծրագրւած որոշման՝ փախստականները բաժնւած երկու խումբի՝ բռնեցին երկու տարբեր ճամբաներ և Տ... գիւղի քարայրին մէջ վերստին միացան իրարու: Անկէ անդին Սասունն էր:

Փրկութեան լուրը երբ հասաւ սարը, արդէն մէկ քանի տարիէ ի վեր հոն բոյն դրած նոր հայդուկներ, նոր անձնւէրներ՝ ուրախութեամբ դիմաւորելու վազեցին փախստականները. Մուրատը չի կար, բայց կար Գէորգը: Գէորգը՝ հակառակ իր բանտակից ընկերներուն, որոնք ընձկւած կերևէին, վառվռուն և աշխույժ էր. երկրորդ օրն իսկ հրացան կը վերցնէր ու գործի կը սկսէր:

Այս միջոցին էր որ Ապրօն ու Թովմասը հիւսի տակ թաղւած՝ խեղդւեր էին: Կը մնար Գէորգին՝ միացած քանի մը ընկերներու, շարունակել գործը, մինչև որ Անդրանիկն ու ընկերները կրկին վերադարձան Կովկասէն: 1898-ին եկաւ նաև Գուրգէնը:

Նոր գործիչները ձեռնարկեցին ժողովուրդի զինման ու ինքնապաշտպանութեան դժարին գործին, դիմաւորելով մէկ կողմէն ամէն քայլափոխի՝ կառավարութեան տևական հալածանքը, դաւերն ու ծուղակները, մնալով անօթի, անպատսպար շատ անգամ, — միւս կողմէն՝ ճեղքելով հաղորդակցութեան ճանապարհներ, ցնցելով ժողովրդին յուսա-

հատ տրամադրութիւնը և կուելով քիւրդերու, կեղեքիչներու և բազմագոյն, բազմատեսակ բռնաւորներու դէմ: Իւրաքանչիւր տեղեկութեան, իւրաքանչիւր ձեռնարկի, իւրաքանչիւր շարժման վիճակած էր՝ քիւրդի, թիւրքի, մատնիչներու կամ զօրքի հետ ճակատ-ճակատի անխուսափելի ընդհարում մը:

Վրայ հասաւ Սերոբի եղեռնական ու խուժուժ մահը, գեղաշէնցի Ավոյի ու իր մեղսակիցներուն անորակելի դաւաճանութեամբը:

Կառավարութիւնը այս վատ յաղթանակովը քաջալերած՝ ուժեղացուց հալածանքը և արդէն կարծեց բողոքը անընկճելի ոգին մահացուցած ըլլալ: Անդրանիկի, — որ կը վարէր Սերոբի գործը — և Գէորգի ու ընկերներուն համար սկսան ամէնէն ցաւագին ու դժնդակ օրերը. թափառական լեռնէ լեռ, ձորէ ձոր, հեռու շէնլիքէ ու գիւղերէ, ստիպած էին կորսնցնել ամէն հետք, ու չորս կողմէն սեղմող կրակի շրջանակի մը մէջ ապահովութեան առասպելական դղեակ մը գտնել: Կառավարական բոլոր սողուն զօրութիւնները՝ զօրք, թիւրք, քիւրդ և ամէն ազգի լրտեսներ ու մատնիչներ՝ կը հալածէին բոլոր մը յեղափոխականները՝ որ անտեսանելի, սակայն ամէնուրեք, կը մնային անհաս ու անպարտելի:

Երբ արդարութեան անողոք հատուցումը հասաւ հայ մատնիչներուն ու գեղաշէնցի Ավոյին՝ որ իր ամբողջ ընտանիքով բնաջինջ եղաւ, կը մնար վերջին դատաստանը Խալիլին, այդ հրէշածին պատուհասին՝ որ խմած էր Սերոբի ու հազարաւոր հայ գիւղացիներու արիւնը: Խալիլը ինքը պատմական չարիքն էր այդ սև երկրին, որուն նամուար, մալը, միւլքն ու կեանքը իր կրունկներուն շուքին հետ ոտքին ետև կը պտտցնէր:

Անդրանիկի ու Գէորգի ազատարար գնդակները անգամ մըն ալ սուրացին Մարնիկի վերկի սարին վրայ՝ յանուն տանջած ժողովուրդի վրէժխնդրութեան:

Խալիլի սպանութիւնը ամբողջ շրջան մը կը բանայ Սասնոյ վերջին յեղափոխութեան համար՝ մինչև Առաքելոց վանքի պատմական գրաւումը:

Սասունը յեղաշրջած էր. ինքնավստահութեան ու դիմադրութեան հոսանքը վերստին կը գրաւէր իր տեղը:

Բայց վարը, քաղաքն ու դաշտերը կը հեծէին երկաթէ մտրակին տակ. սպաննութիւն, աւերում, հրդեհ, կողոպուտ,

բոնաբարութիւն ու տանջանք, տանջանք... Ժողովուրդը ծայրայեղ յուսահատութեան ու լքումի մէջ կը դիմէր դաւանափոխութեան, ուսական եկեղեցիին գիրկը, յուսալով ապահովութեան յենակէտ մը գտնել միայն: Կը զոհէր իրեն համար ամենէն նւիրական զգացումը, իր պապենական հաւատքը, միայն թէ զուտաւր դադրէր և արևին լոյսը քիչ մը արդարութիւն բերէր իր հետ տեղէ մը:

Ահա այս գերագոյն ըրպէնքերուն էր որ, ինչպէս արծիւը գորշ մրրիկներու մէջէն, Անդրանիկի ու Գէորգի խումբը խոյացաւ Սասնոյ կապաններէն դէպի ցած, դէպի Առաքելոց վանքը, ցնցելու համար ժողովրդի գիտակցութիւնը:

Այս պատմական յանդուգն ու մեծ դէպքի միջոցին՝ երբ վանքը շաբաթներով պաշարուած էր զինտրական կուտ շրջաթայով մը, Գէորգը ցոյց տաւ այդտեղ հիանալի ճարտարութիւն, աներկիւղ հերոսութիւն ու անձնւիրութիւն: այս պաշարման միջոցին էր որ՝ գիշեր մը թշնամի բանակէն յոխորտալից ձայն մը կը հասնէր:

—Ո՞ւր պիտի փախչիք մեր ձեռքէն, թէսլիմ եղէք, թէսլիմ եղէք:

Գէորգ քրդերէն լեզուով պատասխանեց հեզնօրէն:

—Դ՞ո՞ւր, կնիկներ, որ պահած էք դիրքերու ետև ու չէք համարձակիր ձեր մազը ցոյց տալ, դ՛ուրս եկէ՛ք, դ՛ուրս, ձեզի հաց ու ջուր տանք և հեռացէք. դուք ո՞վ, կոփը ո՞վ...:

Քիւրդ մը որ անկասկած կրցաւ ճանչնալ Գէորգի ձայնը՝ նոյնպէս հեզնօրէն արձագանք տաւ:

—Վայ, դուն ես, Գէորգ Չավուշ...: (Անդրանիկին անւան միացած փաշա յորջորջումին իբր լրացուցիչ մաս՝ Չավուշն ալ Գէորգին անւան):

Եւ այդ օրէն Չավուշը մնաց պատմական անուն մը, աւելի ճիշտ յիշատակ մը:

Անմոռանալի էջ մը կը կազմէ ապահովաբար, այն դիւցազնական դրագը զարհուրելի գիշերան մը մէջ, երբ պաշարուողներուն յանկարծ իմաց տրւեցաւ թէ զօրքը յաջողած է մօտենալ վանքին և ներս խուժելու պատրաստիլ: Գէորգը դուրս եկաւ քանի մը կտրիճներու հետ դէպի Հաատորիկ և հազիւ փոխանակած տասնի չափ հրացան, թշնամին ետ քաշեցաւ և մինչև վերջ որոշ հեռաւորութենէ մը առաջ չանցաւ:

Երբ հարկ եղաւ թողուլ վանքը և բարձրանալ դարձեալ

լեռնային ապաստանները, ինքը անցած իր զինւորներուն գլուխը, ռազմական հրաշալի տաղանդով մը առաջնորդեց իրեն ղեկավարութեան յանձնած կամաւորներու ընտիր խումբը և կտրեց անցաւ զինւորական շղթան, առանց ոչ մէկ կասկած տալու թշնամիին:

Անսպասելի էր, գրեթէ գերբնական այս փախուստը, որ առասպելական գոյն առաւ եւ ֆէդայիները եղան անխոցելի, և անըմբռնելի՝ ժողովրդային երևակայութեան մէջ:

Տարօնի աչքը՝ սրբած յուսալքութեան արցունքն ու կսկիծը իր թարթիչներէն, հիմա կը դառնար դէպի վեր, դէպի բարձունքները՝ լեցած յոյսով ու հաւատքի սպասումով. հիմա սրտանց կողջունէր Սասունն ու անվախ ֆէդային:

Ժողովուրդը դուրս կուգար վհատութեան հեղձուկ խաւարէն և կը գտնէր իր հոգոյն խորը դարձեալ ապրելու կամքը և պայքարին արիւթիւնը՝ որ հասարակութեան մը գոյութեան իրաւունքը կը հաստատէ:

Առաքելոց վանքի դիմադրութենէն հազիւ երկու ամիս անցած էր, երբ Գէորգը մղեց Նորշէնի յաղթական կոփւր՝ երեք հայերու մատնութեան հետևանքով:

Գէորգ իր մէկ քանի ընկերներուն հետ, որոնց մէջ նաև Կայծակ-Վաղարշակն ու Աստուրը, իջած էին դաշտ հարկեցուցիչ պարագաներու բերումով և կը գտնէին Նորշէն: Երեք նորշէնցի այլասեռած կաթովիկ հայեր կերթան քաղաք, ուղղակի միւթէսարրըֆին քով, որուն հետ կունենան հետևեալ խօսակցութիւնը.

—Փաշա՛ էֆէնտի, մեր գիւղը ինը ֆէդայիներ իջևանած են, որոնք կառավարութեան ձեռքը կուգենք յանձնել:

Փաշան խոժոռ ու յօնքերը պոստած, ատելութեամբ մը կը նայի այս վատորդիներուն երեսին:

—Գացէ՛ք, տեղերնիդ գացէ՛ք, կ'ըսէ բարկութեամբ, գինով հայեր, դուք այսօր խմած կերևիք...:

—Չէ՛, էֆէնտիմ, ըստաղֆուրուլլահ, մեր գլուխը կուտանք, եթէ ըսածնիս սուտ ելլէ, փատիշահին արևուն, Գէորգ Չավուշն այդ խնզրներուն հետ է:

Միւթէսարրըֆը գլուխը կ'երերցնէ, ներքին խորունկ զզւանքով մը և կը պնդէ միշտ.

—Հայեր, դուք խմած էք, վալլահ խմած էք, տեղերնիդ գացէ՛ք ու անկողիննիդ հանգիստ մը քնեցէ՛ք:

— Եթէ դուք մտիկ չէք ըներ, կը կրկնեն փատիշահին ստրուկները, մենք հեռագրով կը դիմենք վալիին ու հրաման բերել կուտանք...:

Զուելի ստրկութիւնը կ'անցնէր ամէն չափ ու սահման:

— Շատ լաւ, կ'ըսէ միւթէսարիՖը, գացէք դուք, իճապին կը նայինք մենք... ու կը դիտէ այս մարդակերպ սողունները, որոնք ցածնալով, երկրպագելով՝ դուրս կուզան կառավարական պալատէն արդէն գոհ ու ինքնաբաւ:

Հիւսէյին աղա ըսած հրէշը, որ ներկայ էր խօսակցութեան, կը գոչէ պարծենալով.

— Ես պիտի երթամ և բերեմ այդ Գէորգ Զավուշին գլուխը...

Առաքելոց վանքին վաղորդայնին էր և տակաւին տպատրուծիւնը շատ թարմ. պաշտօնեաները չափազանց բուռն ու յախուռն կը գտնեն Հիւսէյինին ոգևորութիւնը ու կ'ազդարարեն իրեն տեղը ծանր նստիլ, թողոյ եօթը աշխարհէ հաւաքած ու պատանքը իրենց վզին փաթաթած ու այնպէս պտտելու ելած այդ արկածախնդիրներուն օձիքը:

— Խալիլ աղան աչքիդ առջեւ բեր, Հիւսէյին աղա, կը խրատեն խոհեմները, ան Սերոբին գլուխը կտրեց, սակայն ժամանակ անցաւ ու անոնք ալ վերջապէս իրենը մարմնին վրայ կանգուն չի թողուցին, այս մարդոց հետ իյնալը շէրի չէ...

— Վալլահի պիտի երթամ. այս իրիկան իՖթարը ինծի հարամ ըլլայ, եթէ ես անոնց գլուխները չբերեմ...:

Եւ Հիւսէյինը բռնեց իր խօսքը: Տղաքը յանկարծ իմացան որ գեղը պաշարած է և Գէորգի հրամանով անմիջապէս դուրս եկաւ առաջին խմբակը՝ զարնելու և ճամբայ բանալու:

— Ճամբայ, պոռացին ֆէտայիները հեծեալ ոստիկաններու և խուժանային բազմութեան, որոնց առջև ձիուն վրայ կը սիգար Հիւսէյին աղան:

Եւ գնդակները սուլեցին օդին մէջ: Առաջին անվրէպ մահացու կապարը ծակեց Հիւսէյին աղայի ճակատն ու անցաւ. դիակը ձիէն վար գլորելով Մեղրագետի ալիքներուն մէջ՝ հոսանքը քշեց տարաւ:

Բազմութիւնը ցրեցաւ՝ ինչպէս մշուշը զօրաւոր քամիին առջևէն. խումբին առաջապահ մասը բարձրանալով լեռն ի վեր, գրաւեց Ծծմակայ քիթը: Երբ պաշարողները գլխիկոր ետ դարձան՝ Գէորգ իր ընկերներէն մէկ քանին սարը ճամ-

բեց ու ինք դաշտ իջնալով կատարեց իրեն յանձնած պարտականութիւնը ու վերստին բարձրացաւ լեռը:

Այդ օրերուն կարծես չարիք մը անդադար կը հետապնդէր զինք: Հաատորկաց Շէխ-Նիստ գոմերուն մօտ հանդիպեցան քիւրդերը, և հարկ եղաւ նորէն մղել աննպրտակ կռիւ մը, ուրկէ յաղթական շարունակեց իր ճամբան:

Փոխադրութեան գործին վերահսկողութիւնը յանձնած էր Չավուշին, որուն համար հարկ էր, անդու ու անդադար, տեղափոխութեան մէջ գտնուիլ, սարէն դէպի դաշտ ու դաշտէն դէպի սար: Չավուշ տարիներով առանց վայրկեան մը հանգիստ առնելու, արհամարելով յոգնութիւն ու ամէն տառապանք, եղած է մշտակայ գործունէութեան մը արթուն հոգին, և այս իսկ պատճառով ունեցած է միշտ բաղխում, միշտ ընդհարում՝ քիւրդին, թիւրքին ու իշխանութեանց հետ:

Իր մղած կռիւներուն կէսին կէսը իսկ բաւական էին պատերազմի դաշտին վրայ ունէ զօրապետի, ունէ հրամանատարի կուրծքը շքանշաններով զարդարել և անմահացնել. կռիւներ՝ միշտ անհաւասար ու հերոսական, մղած կտրիճ ու զինավարժ ամենայայտնի ասպատակ քիւրդ ցեղերու դէմ. կռիւներ՝ կառավարական զօրքին ու ոստիկանութեան դէմ. կուրծք տալով ինը-տասը ֆէդայիով՝ քանի մը հարիւր, յաճախ հազարէն աւելի թշնամիի դէմ, և յաղթական դուրս գալ, այո՛, հերոսի գործ էր:

Կը յիշատակենք հոս՝ ընդհանուր գծերով միայն, այն ճակատամարտները, որոնց մոռացութիւնը աններելի զանցառութիւն և նախատինք մը պիտի ըլլար անզուգական հերոսի յիշատակին:

Քաջութեան ու սխրագործութեան կոթողներ պիտի մնան՝ հայ ազգաբնակչութեան արիւնոտ ճամբաներուն վրայ, Բերդակի առաջին կռիւր, ուր մատնիչ Բարսեղի դաւաճանութեան հետևանքով՝ Գէորգ պաշարուեցաւ Ալայ-պէյին հրամանատարութեան տակ գտնուող 200 ձիաւորներովը և դուրս եկաւ յաղթական ու անպարտելի, գնդակով մը Ալայ-պէյին ֆէսն ալ գլխէն թոցնելով: Բերդակի երկրորդ կռիւն ուր, նոյնպէս մատնութեան մը շնորհիւ, լուսաբացին իր եօթ ընկերներով պաշարուեցաւ տան մը մէջ,

սակայն առիւծի պէս խոյանալով իր զինւորներուն հետ, ճամբայ բացաւ ու բարձրացաւ դէպի սարը:

Փոքրիկ խումբը, աննման արիւթեամբ, քայլ առ քայլ, դիրքէ դիրք կռելով, հասաւ Հաւատորիկ. հող յանկարծ յայտնուեցան երկու ոստիկաններ՝ որոնք թելադրեցին հայ գիւղացիներուն զէնք վերցնել ու միանալ յարձակողներուն հետ, կոտորելու համար ֆէդայիները. և ի՛նչ ստորովին հայ արիւնին, գիւղացիներէն ոմանք զէնք բարձրացուցին ու կրակեցին յեղափոխականներուն վրայ: Գէորգ, տեսնելով կայէնական այս արարքը, սրամտութեամբ ու անհուն զայրութով լեցած՝ ձայն տաւ տղոց, թողոյ բուն թշնամին և հրացանները ուղղել դաւաճաններուն վրայ: Կոխը առած էր մոլեգին, կատաղի ուժգնութիւն, որովհետև քիւրդի ու զօրքի թիւը հասած էր արդէն 1000էն աւելի: Բերդակէն միացած մէկ քանի անգէն երիտասարդներ՝ զբաղած էին անդադար դիրքեր շինելու, մինչ եօթ կտրիճները թռչելով միշտ մէկ դիրքէն միւր, ճակատ կուտային ընդարձակ տարածութիւն մը բռնած և հետզհետէ աճող, հազարէն աւելի թշնամիին ու մահ ու սարսափ կը ցանէին իրենց շուրջը: Հասան վերջապէս Ծիրին-Կատար: Հազիւ կէս ժամ ևս տևեց կոխը, երբ բնութիւնը օգնութեան հասաւ: Փոթորիկը սկսաւ ոռնալ և դղրդել սարերը, Ծիրին-Կատարը թափ կուտար իր գլուխը առիւծի պէս բաշերը ցնցելով, հսկայ լեռներու ահեղութիւնն էր որ կը զարթնէր, և կը մոնչէր որոտաձայն. այս տարերային գոռոմ գոչումին մէջ կը թնդային հրացանները անդադար և ֆէդայիները առաջ կը խաղային դէպի Կորեկի-Աղբիւրը, ուրկէ անդին այլևս ամէն ինչ լռեց և խումբը գտաւ իր ապահովութիւնը:

Թշնամին տաւ 4 մարդ և 2 ձի զոհ ու բազմաթիւ վիրաւորներ, մինչ յեղափոխականներէն վիրաւորուեցաւ միայն սպաղանքցի Գալէն իր թևէն. Գալէն, աննման, հրաշալի կտրիճը որ միշտ թիկնապահն ու անբաժան ընկերը եղաւ Գէորգին մինչև վերջը, մինչև մահւան յետին րոպէն ու անոր հետ կողք-կողքի ինկաւ աղէտալի օրան մէջ:

Թշնամի խուժանը՝ որ Մուշէն դուրս եկած էր ծուղակը ինկած այդ եօթը ֆէդայիներուն դիակները քաշելու իր ետևէն քաղաքի հրապարակին վրայ, ետ դարձաւ գլխիկոր ու ամօթահար, տանելով հետը միայն իր զոհերն ու վիրաւորները:

1903-ի Սասնոյ զինտրական ժողովներուն մէջ Գէորգը ընտրեցաւ Զինտրական Խորհուրդի անդամ և զինտրական երկրորդ հրամանատար. պաշտօններ, աւելի ճիշտը յեղափոխական պարտականութիւններ, որոնց կիրառմանը համար ունէր բոլոր առաքինութիւններն ու արժանատրութիւնները: 1903 թականը՝ գործունէութեան այն տենդոտ շրջանը և ընդհանուր վտանգով, սպառնալիքով յղի այն տարին է, ուր արդէն բացորոշապէս զգալի էր կառավարութեան մտադրութիւնը և կատարելիք յարձակումը: Երկու ընդդիմադիր ուժերը՝ յեղափոխական ու բռնակալական՝ կը դիտէին զիրար ու կը լրտեսէին իրենց փոխադարձ շարժումները, իւրաքանչիւրը ինք ամփոփելով իր վրայ, իւրաքանչիւրը սպասելով ազդանշանին:

Գէորգին յանձնած էր Անտոքի պաշտպանութիւնը, ուր՝ դիրքերուն մէջ կը հսկէին հայդուկներն ու ժողովուրդը:

Պէտք էր կազմ ու արթուն ըլլալ՝ դիմաւորելու համար յանկարծական ամէն պատահար: Սակայն հակառակ բոլոր գուշակութիւններուն, թշնամին յետաձգեց իր մտադրութիւնը աւելի պատես հանգամանքի:

Աշնան սկզբի ամիսներուն, Գէորգը պարտաւորեցաւ իջնել դաշտ՝ հրահանգներ տալու, կարգադրութիւններ ընելու և դաշտի ինքնապաշտպանութեան գործը կազմաւորելու համար: Նոր բարձրացեր էր սարը, երբ վերջին ամիսներուն լուր հասաւ թէ Տալտրիկը վտանգի մէջ է: Աճապարեց անմիջապէս դէպի սիրելի Տալտրիկը, որուն պաշտպանութեանը համար այնքան անգամներ կուած և իր կեանքի գնովը օգնութեան փութացած էր: Բարեբախտաբար ունէ լուրջ դէպք տեղի չունեցաւ և ինք թողուց Տալտրիկը ու գնաց ձմեռը Սասնոյ արեւմտեան հարաւային կողմերու հայ գիւղերուն՝ Իշխնձորի, Արդկունքի, Ընկուզնակի և Հեղինի պաշտպանութիւնն ապահովելու քիւրդերուն յարձակման դէմ: Այդ գիւղերուն բնական դիրքը և վերջնական ապահովութիւնը կը պահանջէին թողոյ իրենց վայրերը և քաշիլ ներս, դէպի Սասուն: Չավուշ հսկեց տեղափոխութեան և ապահով - անվտանգ յաջողուց գաղթումը:

1904-ի Ապրիլին արդէն սկսաւ ընդհանուր յարձակումը և բռնկեցաւ Սասնոյ ապստամբութիւնը:

Չավուշը՝ ապստամբութեան առաջին օրերուն բռնած

էր Իշխանձորի, Արդկունքի, ընդհանրապէս արևմտեան հարաւի շրջանը և այդ դիրքերուն պաշտպանութիւնը կ'ապահովէր. բայց երբ լսեց որ Կէլիէկուզանի շուրջը թնդանօթները կորոտան, անմիջապէս քաշեց իր հետ բոլոր ժողովուրդը և վազեց դիմադրութեան կեդրոնը:

Կուի ութերորդ օրը, Ապրիլ 19-ին՝ Անտոքի դիրքերուն պաշտպանութեան գլուխը կանգնած էր: Հեռուէն արդէն քրդական խուժանը և կանոնաւոր զօրքը կը յառաջանար. հանդարտ ու պաղարին՝ թողուց թշնամին որ մօտենար, ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ հրացանի ձայն դիրքերէն: Թըշնամին՝ բացարձակապէս համոզւած թէ իր մարդիկն են հոն սպասողները, համարձակ ու աներկիւղ մօտենալով՝ իսլամական բարևը տաւ.

—Սէլամն ալէքիմ...

Այն ատեն հրացանները որոտացին:

Բարևին պատասխան դիրքերուն ետեւէն յեղափոխական գնդակները սուլեցին, մինչ Գէորգը յանկարծակիի եկած և փախստի թշնամին ետեւէն կը պոռար.

—Ո՛ւր, ո՛ւր կուգաք. Գէորգ Չավուշի բո՞յնը...

Ապրիլ 11-էն մինչև 30, ուր անընդհատ գոռացին կառավարական թնդանօղները և կարկուտի նման ծեծեցին Սասնոյ սարերն ու ապառաժները, Գէորգը ո՛չ մէկ դադար, ո՛չ մէկ հանգիստ, ո՛չ մէկ շարում ու երկիւղ ունեցաւ. վարեց իրեն յանձնւած խումբերը՝ զինւորական աներևակայելի ճարպիկութիւնով, հասաւ ամենէն տաք ու ամենէն վտանգաւոր կոիւներուն և բիւրաւոր զինւորին ու քիւրդ աշիրէթին դէմ, 19 օրայ հերոսական դիմադրութենէ մը ետք, Անդրանիկին հետ ժողովուրդին գլուխն անցած, դաշտն իջաւ:

Այդքան զօրութեան ունայն վատնումը մոլեգնութեան կը հասցնէր կառավարութիւնը՝ որ վարարած գազանի նըման սկսաւ հալածել անըմբռնելի, բայց ահաւոր բուռ մը յեղափոխականները: Դաշտին մէջ յաջորդաբար իրարու ետեւէ տեղի ունեցան Գոմերի, Կուրաւուի և Շամիրամայ կոիւները, որոնցմէ երկրորդին մէջ թշնամին ձգեց 40 զինւոր ու չէրքէզ և բաւականաչափ ուղմամթերք: Շամիրամայ կուի միջոցին, որը տևեց 14 ժամ, Գէորգը հակառակորդին ամենէն ուժեղ թևին վրայ ցանեց այնպիսի ահարկու կրակ մը, որ թշնամին չը կրցաւ տոկալ ու սարսափահար

նահանջեց: Երեկոյեան մութը կոխելէն ետք արդէն քաջարի խումբը նաւ կը նստէր և հասնէր Աղթամար:

Հայ Յեղափոխականներու „Նահանջ Բիւրոցն" էր ասիկա, կատարած ժողովուրդի սիրոյն համար, քանի որ այլևս դիմադրութիւնը ոչ միայն անօգուտ էր, այլև վնասակար՝ խաղաղ բնակչութեան կեանքին ու գոյքին. նամէրտ ու ամէն բարբարոսութեան տրամադիր կառավարութիւնը՝ չի կրնալով գլուխ գալ յեղափոխական կռուողին հետ, կը պատուհասէր անգէն զիւղացին և վրէժխնդրութիւնը կը յագեցնէր՝ այրելով արտերն ու կալերը:

Աղթամարի մէջ գումարեցաւ վերջին Զինտրական Խորհուրդը... Հեռուն սև ճակատագրին ու վատ դուշմանին հետ մեն մինակ կը մնար դժբախտ, անտէր ժողովուրդը, նորէն կը չոքէր գերութեան մութ մառախուղը որբացած սարերու գագաթներուն և մայր հողին բազմաչարչար կուրծքին վրայ:

Խումբը կը հեռանար, բայց ոտքերը չէին երթար. սրտերը անդադար կը թռչէին դէպի ետ, դէպի Սասունն ու աւերակ Տարօնը:

Այդ յուզիչ Խորհուրդին մէջ էր որ որոշեցաւ ընկերներէն մէկը ետ դարձնել, ե՛տ, դէպի ժողովրդին ծոցը զայն չի մատնելու համար աւերիչ յուսահատութեան ու մահաբեր ջլատումի: Եւ այդ պարտականութիւնը սիրայօժար վերցուց իր վրայ Գէորգը՝ ինք, որուն սրտին արդէն այնքան մօտ էր որոշումը:

Երբ հաւաքած իր 17 ուղեկից ընկերները, վերջին անգամ ողջագութեց Անդրանիկը, տասնեակ փոթորկալից տարիներու ամէն յուզումները, ամէն վրդովումները և բոլոր խոտվքները ճաշակած այդ պողպատէ հոգին չի կրցաւ սառնութեամբ դիմաւորել դառն բաժանումը և իր աչքերը թրջեցան արցունքներով: Բայց գաղափարը՝ աւելի թանկ ու սիրելի քան ընկերը, քան զէնքի անմոռանալի եղբայրը, առաջ վարեց զինք:

Հովուտոյց առագաստները շտկեցան դէպի Ախլաթ ու 17 կտրիճները անհետացան Վանայ կապոյտ ալիքներուն վրայ:

Հազիւ անհետ եղած էին անոնք, արդէն Աղթամարը պաշարած էր ու կըսկսէր ուժակոծութիւնը:

Կառավարութիւնը Շամիրամայ կոփին իսկ յաջորդ օրը

ամէն տեղ հեռագրած էր ծովը խիստ հսկողութեան ենթարկել և բանտարկել հանդիպած բոլոր նաւերը:

Գէորգ անտեղեակ թշնամիին կողմէ եղած այս կարգադրութեան՝ կը մօտենայ նաւով Կծուակայ քարերուն: Տղոցմէ մէկ քանին հազիւ ոտքերնին ցամաք դրած՝ գիշերային մթութեան մէջէն դարանամուտ թիւրք զօրքերը բուռն կրակի մը կ'ենթարկեն զանոնք: Չավուշ՝ յանկարծակիի եկած, չի կորսնցներ սակայն իր մտքին կտրուկ վճռողականութիւնը և պաղարիւնութիւնը. կը հրամայէ տղոց շուտով առաջ անցնիլ և դիրք բռնել Կծուակայ քարերուն գագաթը: Հոս է որ պատական, ամէն հիացումի արժանի ռազմիկ կամաւորները՝ զոհ տալով միայն մէկ ընկեր՝ Աստուրը, կը թռչին դէպի Նէմրութի լանջերը, թշնամիէն խլելով բաական թուով զոհեր: Սերոբի այս պատմական օթեանին՝ Նէմրութի սարերուն վրայ օր մը մնալէ ետք, կ'անցնին Մուշ:

Անլուր հարածներուն և խստութեանց ենթակայ ժողովուրդը՝ որ ֆէտայիներու մեկնումէն ետք, անձնատուր էր եղած սև անձկութեան, ծանր թախիծի ու մնացած ինք իր գլխուն, անկարող ղեկավարելու իր բաղդը, երբ իմացաւ Գէորգի ներկայութիւնը՝ իր մէջ, իր քով ու իրեն մօտ, կրկին ունեցաւ սփոփանքի թեթև սարսուռ մը, կրկին իր հոգւոյն խորը զգաց յոյսի մը բաբախումը: Գէորգը հոն էր՝ կեղեքիչներուն սարսափը:

1904-էն մինչև 1907, իր եղերական մահւան օրը՝ Գէորգի կատարած դերն ու գործունէութիւնը գուցէ ամէնէն դրժարն ու դժնդակն է քան մնացած իր բոլոր զոհաբերութիւնները: Օր ըստ օրէ բռնութեան տակ ֆիզիքապէս ու նիւթապէս հիւծող ժողովուրդ մը՝ անխուսափելի կերպով կը դիմէր նաեւ բարոյական քայքայման. ոչ միայն քիւրդ ու թիւրք պէկերու, աղաներու և ասպատակողներու երկաթէ ձեռքը կը ծանրանար հայ աշխատանքին, հայ օճախին ու նամուսին վրայ, այլ նոյն իսկ ժողովուրդին ծոցէն կը վիժէին այլասեռածներ, մատնիչներ ու կեղեքիչներ: Պէտք էր ազատել իրաւագուրկ և ուժաթափ տառապողները այդ ամէնուն ժանիքէն ու կլափէն: Իր պարտականութիւնն էր կռիլ արտաքին ու ներքին բոլոր սողուններուն դէմ, որոնցմէ շատերուն գլուխը արդէն կրցաւ ջախջախել: Յիշենք միայն ամենէն գլխատրներէն մէկը՝ մշեցի Քէրիմ աղան՝ որ բռնութեամբ, բիրտ ուժով տիրացած էր Ալիճան հայ գիւ-

ղի ամբողջ կէսին, գերութեան ու տարապարհակ աշխատութեան մատնելով ամբողջ գիւղացիները: Քէրիմի չարաչար մահը փրկեց ոչ միայն Ալիճանը, այլ և շրջակայ բոլոր հայ գիւղերը այդ զգւելի վամբիռէն:

Գէորգ մէկ կողմէն պատուհասելով չարագործները, միակողմէն իր իսկ ձեռքով՝ նպաստներ բաշխեց կարօտեալներուն, հասնելով հայ աշխատատուր ժողովուրդին նիւթական ու բարոյական կարիքներուն միանգամայն՝ որքան կը ներէին իր ուժերն ու իր միջոցները:

Գուցէ այս անզուգական հերոսին բեղմնատուր կեանքը տակաւին թերի գիծ մը, էապէս յեղափոխական պակաս մը ունենար, եթէ զոհողութեան բաժակը չյորդէր, եթէ իր գարշելի տգեղութեանը մէջ չ'արտայայտէր ապերախտութիւնը անոնց, որոնց նիւրեց ամէն ինչ, և՛ երիասարդութիւն, և՛ խանդ, և՛ արին, և՛ կեանք: Եղան, այո՛, հայ գիւղերու ծոցէն իսկ դժնէ վատեր, որ փորձեցին քանիցս թոյնով վերջ տալ անոր անգին կեանքին:

Հալածական շարունակ վերջին երեք տարիներու ընթացքին, չունենալով ո՛չ մէկ հանգստի օր, ո՛չ մէկ հանգստի րոպէ, ո՛չ մէկ խաղաղ քուն, բռնադատեցաւ, ակամայ Խարսի և Ալվառինճի մէջ մղել երկու կոփուներ անպատկառ թշնամիին դէմ, առաջին կոփին զոհ տալով Եղօն՝ ճահիճներու մէջ և երկրորդին՝ բոլոր իր ընկերները, անվտանգ մնալով ինքը միայն:

Ընկերներու բոլոր թախանձնանքը ի զո՛ւր անցաւ՝ դուրս բերելու համար զինք, ատենաան մը համար, երկրէն, ուր արդէն առարկայ դարձած էր կառավարական բուռն հետամտութեան ու անխնայ հալածանքի: Ինք իր անձէն աւելի թանկ կը գնահատէր ժողովուրդին ցան ու տառապանքը և այս պատճառով հսկեց այդ ցաւին ու տանջանքին, կրօնելով անոնց պատճառներուն դէմ տևականապէս ու առանց զինադադարի:

Հասաւ վերջապէս սև օրը, մայիսի 27-ը: Ռուբէնի ու 17 ընկերներու հետ իջած էր Սուլուխ ստիպողական գործի մը առիթով, ուր հանդիպեցան նաև երկու թիւրքեր, բարեկամ ճանչցած մինչև այն ատեն ու վստահելի:

Քանի մը ժամ չէր անցած թիւրքերու մեկնումէն, երբ գիւղը պաշարուեցաւ ոստիկաններով ու զօրքով: Սուլուխը յայտնի էր իր հարթ, ռազմական ամէն դիրքէ ու յարմար

րութենէ զուրկ հանգամանքովը: Անխուսափելի կոփւր ըսկասա: Գէորգ Չավուշ իր ծանօթ յանդգնութեամբն ու խիզախումովը դուրս եկաւ գիւղէն՝ յարձակելու ահագին բազմութեան մը վրայ ու ցրելու զայն: Անկարելին կը փորձէր: Դեռ կռիւն սկիզբն իսկ՝ չքնաղ հերոսը զարնած՝ ինկաւ արդէն: Սպաղանքցի Գալէն, նոյնքան առիւծասիրտ կտրիճ մը և վաղօրեայ զինուոր, որ անբաժան ու կարծես երդւեալ ընկերն եղած էր Գէորգին, մասնակցելով անոր հետ կողք-կողքի բազմաթիւ հերոսական պայքարներու՝ տեսնելով խաւարումը Տարօնի արևուն, առաջ նետուցաւ ինքն ալ՝ վրէժխնդրութեան մոնչիւնը շրթունքներուն վրայ, բայց ճակատագրական գնդակը փոեց զինք ալ գետին, և անբաժան տարիներու գաղափարական ձգտումին ու ազատութեան մարտնչումներուն մէջ, անբաժան ու հաւատարիմ մնացին նաև երկու քաջերը մահուան իրենց ուխտին մէջ ալ:

Սասունը՝ հերձելով իր ժայռոտ կողերուն կրանիթէ արգանդը՝ վրէժխնդրութեան ու փառքի օրան մը մէջ Ազատութեան ու Արդարութեան դժնդակ պայքարին իբրև հատուցում դուրս ժայթքած էր այս մրրկաթև Ասպետը, որ երբէք չը գիտցաւ ամօթաբեր ընկրկումը:

Դժար և անհնար է քանի մը էջերով և թոուցիկ տողերով գծել կեանքը մեծ Նահատակին որ, անսահման անձնիրութեամբ ու ապշեցուցիչ համարձակութեամբ մը, 18 տարի առանց զէնքը վայր դնելու, մղած է քառասունէն աւելի կռիւներ յաղթական և հիանալի: Իր վեհանձն հոգին՝ անողորմ ու անսիրտ բռնաւորների առջև և աղանիի պէս քաղցր իր ամէնօրեայ կեանքին ու ընկերական վերաբերմունքի մէջ՝ չէ ճանչցած ո՛չ մէկ փառասիրութիւն բացի զէնքի յաջողութենէն: Այդ տարօրինակ հոգին տասնեակ տարիներ մշտական սարսափն եղաւ ժողովրդի բոլոր բռնաւորներուն, միա կողմէն անսահման ժողովրդականութիւնն ու պաշտամունքը իր ետևէն քաշեց: Որովհետև, իղէալը՝ որ առաջնորդեց իր կեանքը, այնքան սուրբ ու նիրական էր՝ որքան իր սիրած ժողովուրդին տանջանքն ու թշառութիւնը:

Հաւատք՝ յեղափոխական դիմադրութեան ու նիրում՝ ժողովրդական դատին, ահա այն նշանաբանը՝ որուն մշտեալ հետևեցաւ իր ամբողջ կեանքի ընթացքին և որուն


րոպէ մը չի մտաբերեց դաւաճանել: Անիկա կեցաւ կրկէսին մէջ՝ աղեղը ձեռքին ու կապարճը ուսին, կեցաւ՝ ինչպէս սպարտացին իր հայրենիքի նւիրական պարտականութեան գլուխը, և ինկաւ՝ ինչպէս օրինապահ և քաջարի զինուոր:

Ու վստահաբար Առաքելոց վանքի մօտ, դէպի Սասուն տանող առաջին ճամբուն վրայ սգաւոր Տարօնը յարգանքով ու հիացումով ծունկի եկած անոր մահարձանին առջև, հոն պիտի գրէ դողդոջուն ձեռքերով.

„Անցորդ, գնա՛ պատմէ՛ Հայաստանի զաւակներուն, որ իր օրէնքներուն հնազանդելու համար ինկանք այստեղ“:

Հ Ա Յ Յ Ե Ղ . Գ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը



1. Ապստամբական ոգի (սպառնաժ)
2. Յեղափոխական կեանքից (սպառն.)
3. Գաղտնի տպարան (սպառն.)
4. Գիտական սօցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառն.)
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր. (Դ. տպագր.)
6. Կուկունեան խմբի արշաւանքը. (սպառն.)
7. Կարնոյ յիշատակին (*Չորս հատնաժ*) „
8. Հ. Յ. Դ երրորդ ընդհ. ժողովի ատենագրութիւնը
9. Զրքիջներ, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառն.)
10. Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ. (սպառն.)
11. Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Ա. (սպառն.)
12. „ „ „ Բ. „
13. Ամբոխային տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ. (սպառն.)
14. Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Գ. „
15. Հայաստան եւ Մակեդոնիա.
16. Կովկասեան վերքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառնաժ)
17. Հայրենիքի գաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառն.)
18. Կազմակերպական կանոններ. (Բ. տպագր.)
19. Դէպի կռիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ (սպառնաժ)
20. Յեղափոխականներ. Ա. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառն.)
21. Նախագիծ Կովկասեան գործունէութեան. (Բ. տպ.)
22. Подвиги царизма. В. Арапатский.
23. **Les tueries de Bakou**, A. ARAZI
24. Յեղափոխական դաշն.
25. Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի ատենագրութիւնը.
26. Կոչ Մահմէտականներին (թուրքերէն)
27. **Les Plaies du Caucase**, E. AKNOUNI
28. Ազատութեան ճանապարհին. ՂԱՐԻԲ. Դ. գրքոյկ
29. Մեծ մարդասպանի դէմ (Դատաւարութիւն)
30. Վիտօշի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ

31. Յեղափոխականի մտքերը. ԲՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
32. Հայորդիները. ՍԻԱՄԱՆԹՕ
33. Սասուն-Մուշի կռիւները
34. Հայկական տանջանքները եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՅՆ
35. Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ
36. Միացէ՛ք, կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն)
37. Թիրքական բանտերը. ՄԱՐ.
38. Քաղաքական կուսակց. Ռուսաստ., ԱՐԱՐԱՏԱՍԿԻ
39. Հայաստանը եւ Եւրոպան. Գ. ԲՐԱՆԴԷՍ
40. Աղբիր-Սերոբ (կենսագրական). Ս. Մ.
41. Եւրոպացիներու կարծիքը
42. Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան
43. Չորրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները
44. Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր" (1907)
45. **Programme-minimum**, Հ. Յ. Դ.
46. **Rapport**–Ներկայացրած Միջազգային սօցիալիստական կոնգրէին (Շտուտգարտ)
47. Գեորգ Չավուշ

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

*«Հայկական ազատամարտը», «Ֆինլանդիա - Կովկաս»
(ալլէգորի) և հետևեալ յեղափոխական հերոսների
պատկերներով.*

Վազգէնի,
Սերոբի,
Պետօի,
Գուրգէնի,
Արաբօի,
Կարօի,

Սերոբի և որդոց,
Հրայրի,
Վահանի,
Բաբկէնի,
Շահէնի,
Քրիստափորի,

Կայծակի,
Պետօի,
Երկաթի,
Խանի,
Թորգոմի,
Թաթուլի:

Սէրին (20 հատը) 1 ֆր.

